

ԽՍՀՄ ԺՈՂ. ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻՆ ԿԻՑ

ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ՄՅՈՒԳՎԱԾՄ Է 1981 թ.

ԱՂՈՒՆԱՎԱՐՁ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ

1935

ՅԵՐԵՎԱՆ



380.17:633. ԵՏՈՒԳՎԱՐԻ Բ 1981 Ձ.

ՀՐԱՀԱՆԳ

ՄԱՍԻՆԱՎԱՐՁ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ-ի ԺՈՂՎՈՄԻՍՈՐՇԻՆ ԿԻՑ ՄՅԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ

Մ.Բ.Ս.ՋԻՆ ՄԱՍ

ՀԻՄ

1. ՀՍԽՀ տնտեսական տերիտորիայի վրա գտնվող բոլոր աղացները, ձիթահանները, դինդիերը և այլ նման ձեռնարկությունները, անկախ դրանց ուժ պատկանելուց, կարողություններից, շարժիչ ուժի տեսակից և վորտեղ գտնվելուց, պարտավոր են հացահատիկային հատիկային և ձիթատու մշակույթների և բրինձ ազատու ու վերամշակելու համար, իբրև վարձ, գանձել ազոնավարձ, ըսցառապես ընամթերքով:

2. Ազոնավարձը գանձվում է բոլոր հացահատիկային, հատիկային, ձիթատու մշակույթներից և բրինձից, վորտեք տրվում են վերամշակելու կոլեկտիվ տնտեսությունների, կոլտնտեսականների, բոլոր սիտեմի խորհրդային տնտեսությունների (այդ թվում նաև ԲՄ բաժինների) և մենատնտեսների կողմից, անկախ այն հանգամանքից, թե նրանք ինչ աղբյուրից են ստացել այդ մշակույթները:

Ա4012

Մանրորոշում. — Ազոնավարձից ազատվում է միայն այն կերային հացահատիկը, վորն անասնապահական և թռչնաբուծական խորհրդանշաններով:



տեսություններում հատիկ ջարդող մեքենաներով
և բլիզարգներով վերամշակվում ե իբրև անաս-
նի կեր:

Տ. Այն հացահատիկը, վոր այլ կազմակերպու-
թյունները պլանային կարգով ստանում են Զագոս-
գեանոյից ալյուրի և հատիկի (կրուպայի) փոխարեն,
նաև այն հացահատիկը, վոր սպառկոպերացիան և
պետական առևտրական կազմակերպություններն ստա-
նում են վերամշակելու՝ ալյուր և թխած հաց վաճա-
ռելու համար, ազատվում են աղունավարձից, և զքա
վերամշակության վարձը վճարվում ե զքամով՝ հաս-
տատված զրույքներով:

Մանրուքյուն. — ա. Խորհանտեսություն-
ները, սպառկոպերացիան և այլ պետական ու
կոոպերատիվ կազմակերպությունները, վորոնք
առլիս են վերամշակելու իրենց բերքից ստաց-
ված հացահատիկային, հատիկային, ձիթատու
մշակույթները և բրինձը, աղունավարձը վճա-
րում են ընդհանուր հիմունքներով (բնամթեր-
քով), անկախ այն հանգամանքից, թե իրենց
կամ ուրիշին պատկանող ազացներում ե կա-
տարվում վերամշակումը:

բ. Ալյուր և հատիկ ազացող բոլոր ձեռ-
նարկությունները, ձիթհանները և գինգերը պար-
տավոր են այդ ձեռնարկությունների տերերին
կամ վարձակալներին պատկանող հացահատիկը,
հատիկը և ձիթատու մշակույթներն ազալու և
վերամշակելու համար աղունավարձ գանձել այլ
աղունատերերին հաժտաբար պայտաններով և շա-
փով:

4. Կենտրոնական միջոցներից ստացված պետական և կոոպերատիվ կազմակերպություններին պատկանող հացահատիկային, հատիկային և ձիթատու մշակույթներն ու բրինձն աղալու և վերամշակելու համար բնամթերքով վճարվող աղունամյարձից աղատվելուն իբրև հիմք և ծառայում Զազոտղեոնոյի ավան կարգազերը (նարյազը) կամ այլ փաստաթուղթ, վորը փոխարինում է կարգազերին: Աղունատերը պետք է ներկայացնի այդ կարգազերը կամ այլ փաստաթուղթ՝ հացահատիկը, հատիկային և ձիթատու մշակույթները և բրինձն աղալու կամ վերամշակելու հանձնելիս:

Ձեռնարկույթյունը (աղացը, ձիթհանը, դինգը) մարում է կարգազերը կամ այլ փաստաթուղթը, վորը ներկայացված է իբրև աղացույց այն բանի, վոր վերամշակվող մթերքը պետական, կենտրոնացած միջոցներից է ստացված, հետևյալ ժակագրույթյամբ կամ շտամպով՝ «սույն կարգազրով (կամ փաստաթղթով) վերամշակումը կատարված է այսինչ քվին»՝ ձեռնարկույթյան վարչության ստորագրույթյամբ:

6. Համաձայն Միութենական Ժողովածխորհի և Համ. Կոմկուսի Կենտկոմի 1935 թ. հունվարի 17-ի ժողովման, վերացվում է աղացների և դինգերի ցանցի տեղին տեսակի սահմանափակումը, և բոլոր այդպիսի ձեռնարկույթյունները կարող են գործել՝ նախորդ ստմարագրվելով Մթերման կոմիտեյի շրջանային լիազորների գրասենյակում:

5. 1934/35 և 1935/36 թվականներին ՀՍԽՀ սահ-

մանքնքուս կիրառումն են ապահովարնի գանձանք
 Ինքնամբար Լուրդի

Հասցանամանիկի անունքը	Վերամշակ- ման անունը	Քանական նորմանքը կիրառած . . . ով		
		Համայնաց- ված սեկտու- րին	Ազխատավոր մեծանունու- նի	Գույակարին անունու- նի
Ցորեն	Ալյուր	7	7,5	9
«	Ջափար	8	9	10
Տարեկան	Ալյուր	9	10	11,5
Փարի և զարսակ	«	8	9	10
« « «	Ջափար	10	11	12,5
Հանար	«	10	11	12,5
Պատանուրդ (գարնիկար)	Ալյուր	10	11	12,5
«	«	10	11	12,5
Յեզիպտացուրեն «	Ջափար	12,5	14	15,5
Սրահ	Ալյուր	11	12	14
Կորեկ	Մեծեղու	13	14,5	16,5
«	Անտանի կեր	12	13	15
Չալիքուկ	Բրինձ	10	11	12,5
Ցիլիպուրու սերմեր	Ց և ք	16,5	18	21

6. Հիշյալ նմանքներից ուղիղ կամ պակաս համար
 արեւմտարձ գանձին արգելում քաղաքացու
 Մանքուրյուց.— ՀՄԽՀ համար հաստատված

աղուհնավարձի նորմաները պետք է հրատարակվեն Մթերման կոմիտեյի Հայաստանի Լիազորության կողմից առանձին թերթիկներով և հանձնվեն բոլոր ձեռնարկություններին, պարտավորեցնելով դրանց՝ այդ թերթիկները կախել աչքի ընկնող տեղում: Հիշյալ նորմաները պետք է ուղարկվեն նաև բոլոր գյուղխորհուրդներին և ՄՏԿ-ներին:

7. Բնամթերքով աղուհնավարձ տալուց ազատվող հացահատիկային, հատիկային և ձիթատու մշակույթները և բրինձն աղալու և վերամշակելու վարձը գրամով վճարելու նորմաները մշակույթ է Մթերման կոմիտեյի Հայաստանի Լիազորությունը և հաստատում և Ժողկոմխորհը

8. Ձեռնարկությունների տերը և վարձակալները պետք է աղուհնատերերից աղուհնավարձը գանձեն հացահատիկով, հատիկով, ձիթատու մշակույթներով և բրինձով, այսինքն՝ այն մշակույթներով, վոր բերված է վերամշակույթյան համար:

Աղուհնավարձն այլ՝ ավելի ցած արժեք ունեցող մշակույթներով փոխարինելն արգելվում է:

Աղուհնավարձն անպայման պետք է գանձվի միայն լավորակ հատիկով, այսինքն՝ նույն վորակով, վորը սահմանված է հացի պետական մթերումների համար, անկախ վերամշակույթյան արված հատիկի վորակից:

9. Այն դեպքում, յերբ վերամշակույթյան համար բերվում է զանազան մշակույթների խառնուրդ, աղուհնավարձը պետք է գանձվի նույն խառնուրդի ավելի արժեք ունեցող և մի տեսակի մշակույթով:

10. Այն դեպքում, յերբ վերամշակույթյան են բերում փոխանյութեր (суррогат) և տակաճ, վոր

բոնց մեջ հացահատիկային խառնուրդը 10⁰/₀-ից
ավելի չե, աղու նաւարձը գանձվում է դրամով Ժող-
կամխորհի կողմից հաստատված դրույքներով:

Իսկ այն դեպքում, յերբ վերամշակության հա-
մար բերված փոխանյութերը և տականքն իրենց մեջ
պարունակում են 10⁰/₀-ից ավելի հացահատիկային խառ-
նուրդ, աղու նաւարձը գանձվում է կերային մշակութ-
ներով, որիննակ՝ դարով, վարսակով և այլն [այսինքն՝
ցենտներից 8 կիլոգրամ, 9 կիլոգրամ, 10 կիլոգրամ
(ըստ սեկտորների)]:

11. Աղունավարձը գանձվում է վերամշակության
համար բերված ամբողջ հատիկից:

Մթերման կայաններին ավանսով աղունավարձ
հանձնող աղունատերերից աղունավարձը գանձվում է
փաստորեն վերամշակված հացահատիկի քանակից:

12. Զեւնարկությունների կողմից աղունատերե-
րից գանձված ամբողջ աղունավարձը պետական սե-
փականություն է, վորը ձեւնարկության տերերը
պետք է լրիվ, իրենց միջոցներով, տարայով և իրենց
ծախքով հանձնեն պետությանն այն մթերման կա-
յաններում, վորոնք ցույց են արված Մթերման կո-
միտեյի շրջիտպորների կողմից նրանց արված ծանու-
ցագրերի մեջ՝ պահպանելով այն ժամկետները և պայ-
մանները, վորոնք նշված են հիշյալ ծանուցագրերում:

Մանրորայում.— Աղունավարձը պետք է հանձն-
վի մթերման կայաններին մի բևաի (սայլի կամ
անասունի) չափ հավաքելու դեպքում: Զեւնար-
կություններում յերեք ցենտներից ավելի աղու-
նավարձի կուտակումն արգելվում է:

13. Աղունավարձը կարելի չէ ծախսել միայն

Ձագտագեանոյի կարգադրերով (նարյագներով): Ազու-
նավարձի ոգտագործումը ձեռնարկությունների տերե-
րի և վարձակալների կողմից՝ իրենց սեփական կա-
րիքների և ձեռնարկությունների նորոգման ծախքը
վճարելու համար, տեղական կազմակերպությունների
կարգադրությամբ ծախսումը վաճառքի համար, նաև վո-
րևե այլ նպատակի համար ոգտագործումն արգելվում է:
Ազունավարձն սպորտի ծախսելու մեջ հանցավոր
անձինք յենթակա յեն քրեյական պատասխանատվու-
թյան՝ 1932 թ. ոգտստոսի 7-ի որենքի համաձայն:

Կտրկանապես արգելվում և առանց Մթերման
կոմիտեյի Լիազորության կարգադրության ազունա-
վարձը ձեռնարկություններում բրոնիայի յենթարկելը:

14. Ձեռնարկությունների տերերը և վարձակալ-
ները պարտավոր են իրենց ստացած ազունավարձը
մթերման կայաններին հանձնել լազորակ հացա-
հատիկով, հատիկով, բրնձով կամ ձիթատու սերմերով,
այսինքն՝ այն մշակույթով, վորը բերվում է վերա-
մշակման համար:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒՄԸ

15. Ազունավարձի գանձումը կազմակերպելու և
կոնարոյի պարտականությունը դրվում է ԽՍՀՄ-ի
Ժողկոմխորհին կից Մթերման կոմիտեյի ՀՄԽՀ-ի
Լիազորության և նրա շրջանային լիազորների վրա:

16. Ազունավարձի գանձման և մթերման կայան-
ներին հանձնելու գործը կազմակերպելու և վերահսկե-
լու համար, Մթերման կոմիտեյի Լիազորությունը

չբշաննեքում նշանակում ե աղունավարձի շրջանային
տեսուչներ, վորոնք մանում են Մթերման կոմիտեյի
չբշխագործների ապարատի կազմի մեջ և իրենց աշխա-
տանքը տանում են՝ առաջնորդվելով կառավարութան,
Ժողկոմիտեին կից Մթերման կոմիտեյի Լիագորու-
թյան և նրա շրջանային լիագործների վորոշումներով
և կարգադրութուններով, իրենց սպերատիվ աշխա-
տանքների մեջ յենթարկվելով Մթերման կոմիտեյի
չբշխագործներին:

Այն շրջաններում, վորտեղ Մթերման կոմիտեյի
չբշխագործների պարտականութունները կատարում են
չբշգործկոմիտեի նախագահների տեղակալները, աղու-
նավարձի տեսուչներն իրենց սպերատիվ աշխատան-
քում յենթարկվում են վերջիններին:

Նայած շրջանի ձևանարկութունների թվին, նը-
բանց կարողության և տեղադրական գրության,
յուրաքանչյուր շրջանի կամ մի քանի վարչական շր-
ջանների համար նշանակվում ե մի տեսուչ:

Այն դեպքում, յերբ մի տեսուչն ապաստակում ե
մի քանի վարչկան շրջաններ, նա պետք ե հաշվի
Մթերման կոմիտեյի այն շրջանային լիագործի ապա-
րատի կազմի մեջ, վորի շրջանն աղունավարձի դանձ-
ման տեսակետից ավելի մեծ նշանակութուն ունի,
իսկ իր աշխատանքները յուրաքանչյուր շրջանում
պետք ե տանի առաջնորդվելով այդ շրջանի մթերման
կոմիտեյի շրջլիագործների ցուցումներով:

Աղունավարձի շրջանային տեսուչների հաստիքը
և նրանց մշտական բնակության տեղը վորոշում ե
Ժողկոմիտեին կից Մթերման կոմիտեյի Լիագորու-

թյուշը՝ նախահաշվով նախատեսված դրամական միջոցները սահմաններում:

17. Մթերման կոմիտեյի Հայաստանի Լիազորի կողմից աղուճավարձի գանձման մասին կայացրած վորոշումները կարող են փոփոխվել կամ վերացվել միայն ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Մթերման կոմիտեյի կողմից, իսկ Մթերման կոմիտեյի շրջանային լիազորները վորոշումները կարող են փոփոխվել կամ վերացվել միայն Մթերման կոմիտեյի Հայաստանի Լիազորութան կողմից:

18. Աղուճավարձի գանձման տարեկան պլաններն ըստ հանրապետությունների, յերկրների և մարզերի (քաղկված ըստ ամիսների և կուլտուրաների) հաստատվում են ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Մթերման կոմիտեյի կողմից:

Հայաստանի համար աղուճավարձի տարեկան պլաններն ըստ շրջանների, կուլտուրաների և ամիսների կազմում և Մթերման կոմիտեյի Հայաստանի Լիազորությունը, յիշելով ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Մթերման կոմիտեյի կողմից հանրապետության համար հաստատված պլանից և այն ներկայացնում և Ժողկոմխորհին ի հաստատություն:

19. Հիմք ունենալով շրջանների համար հաստատված աղուճավարձի գանձման պլանները և նկատի ունենալով շրջանի գործող ձեռնարկությունների ցանցը, նրանց արտադրողական ունակությունը, բեռնվածությունն ու աղուճավարձի գանձման նորմաները՝ Մթերման կոմիտեյի շրջակազորները մշակում են շրջանի աղուճավարձի գանձման տարեկան պլանները՝ ըստ կուլտուրաների, ամիսների և ձեռնարկություն-

ների և ներկայացնում են շրջագործկոմիտեի և հաստատութայունը:

Շրջագործկոմիտեերը պարտավոր են, ներկայացնելու թվից 5 որվա ընթացքում, քննել և հաստատել պլանի նախագիծը:

Մանորուքյուն.— ա. Ի փոփոխումն մինչև 1935 թվի հունվարի 1-ը գոյություն ունեցող կարգի, ընթացիկ տարում գործող ձեռնարկությունների ամեն տեսակի սահմանափակումները վերացվում են և բոլոր աղացները կարող են գործել՝ նախորդ Մթերման կոմիտեայի շրջլիազորների գրասենյակում տոմարադրվելուց հետո:

բ. Աղունավարձի հանձնման պլանները մշակելու աշխատանքներին մասնակից են դարձվում ձեռնարկությունների վարիչները:

20. Այս հրահանգի 19-րդ հոդվածի համաձայն հաստատված պլանի հիման վրա, դրա հաստատվելուց յերկու որվա ընթացքում, աղունավարձի տեսուչը յուրաքանչյուր ձեռնարկության համար կազմում է ծանուցագիր՝ սրան կից ձևով, ցույց տալով ձեռնարկության կողմից հանձնվելիք աղունավարձի քանակը:

Մանուցագրերն ստորագրվում են Մթերման կոմիտեայի շրջլիազորների կողմից: Բոլոր ձեռնարկությունները հացահատիկի վերամշակության համար առացած ամբողջ աղունավարձը պարտավոր են հանձնել պետութայունը:

Կրկեկտիվ տնտեսություններին, խորհրդատեսություններին և համայնացված սեկտորին պատկանող այլ ձեռնարկությունների համար, վորոնք հացահատիկի վերամշակման կանոնավոր հաշվառում չունեն,

աղուենավարձի ծանուցագրերը գրվում են մտազուրկ հաշվով յեղնելով ձեռնարկություններէ արտադրական հնարավորություններէց, աղացից ոչտվող բնակչության կողմից բերվող աղուենի հավանական քանակությունից և աղալու սեղոնից:

Հիշված ձեռնարկություններն աղուենավարձը հանձնում են համաձայն իրենց հաշվառման տվյալներին:

Մանրութիւն. — Ձեռնարկություններին ծանուցագրեր հանձնելու հետ միաժամանակ, Մթերման կոմիտեյի շրջիազորները համապատասխան դուղխորհուրդներին հայտնում են այն ձեռնարկությունների ցուցակը, վորոնք պարտավոր են աղուենավարձ հանձնել, ցույց տալով ձեռնարկության (կամ նրա տիրոջ) անունը, հանձնվելիք աղուենավարձի քանակը և ժամկետը:

21. Խորհանտեսություններին, շրջագործկոմիտեներին և այլ պետական ու կոոպերատիվ կազմակերպություններին պատկանող այն աղացները, վորոնց հաշվապահությունը վարում են վորակավոր հաշվապահներ և հաշվետարներ, հացահատիկի վերամշակման և աղուենավարձի հաշիվները տանում են իրենց վարչությունների կողմից հաստատված ձևով:

Իսկ յեթե պարզվի, վոր խորհանտեսություններին, շրջագործկոմիտեներին և այլ կազմակերպություններին պատկանող վորեւէ ձեռնարկությունում հացահատիկի վերամշակման հաշվետարությունն անբավարար և և չի ապահովում աղուենավարձի մուտքի և յելքի կանոնավոր հաշվառումը, Մթերման կոմիտեյի շրջիազորն իրավունք ունի նման ձեռնարկություններին պարտավորեցնել պահելու շաղուենավարձի հաշվառման որագիծ՝ կողանտեսությունների համար հաստատված ձևով:

22. Այն դեպքում, յնրբ ձեռնարկություններն անհրաժեշտ հաշվառում չունեն և հաշվապահությունն այնպես չեն կազմակերպել, վոր կարողանան հացահատիկի վերառնակության և աղունավարձի դանձման իրական պատկերը տալ, այդպիսի ձեռնարկությունների համար աղունավարձի հանձնման չափը վորոշվում է ծանուցագրերով՝ յեղնելով դրանց արտադրական ունակութունից, դորձելու սեղոնից և այդ ձեռնարկություններից ողտվող աղգարնակչության կողմից աղալու բերվելիք հացահատիկի քանակից, ըստ մշակութների: Այդպիսի ձեռնարկությունների համար ծանուցագրերում նշված քանակը համարվում է աղունավարձի հանձնման պլան:

Ծանուցագրերում նշված աղունավարձի չափը պետք է համարվի իբրև կայուն առաջադրանք:

Այդպիսի ձեռնարկությունների կողմից աղունավարձի պլանը չկատարվելու դեպքում անհրաժեշտ է ճշտել, թե ինչու նրանց համար վորոշված պլանը չի կատարվում, և հայտարարել թերակատարության պատճառները:

Յեթե ստուգումից պարզվի, վոր աղունավարձը թաղցվել կամ դողացվել է, այդ դեպքում վատնված աղունավարձն ամբողջովին անվիճելի կարգով դանձվում է աղացի տիրոջ կամ վարձակալի տնտեսության հացահատիկի ամեն տեսակի Ֆոնդերից, իսկ յեթե աղունավարձի նկատմամբ վորևե հանցանք չի հայտարարվում և ցուցմունքներ չկան աղունավարձը թաղցվելու կամ դողացվելու մասին, այդ դեպքում պետք է վերանայվի ձեռնարկության պլանը և հարմարեցվի նրա աշխատանքի հայտարարված պայմանների և ապունով բեռնվածությանը:

23. Մասնավոր անձանց պատկանող ձեռնարկու-
թյունների աղուհավարձը հանձնելու ծանուցագրերը
դրվում են մի տարվա համար՝ բաշխելով ըստ ամիս-
ների և մշտհուլթների Այդ ձեռնարկությունները
պետք է հանձնեն աղուհատերերից պանձված ամբողջ
աղուհավարձը, բայց լող սլակաս ծանուցագրերում նշը-
ված քանակից

24. Բոլոր աղացներում, ներառյալ նաև խորհ-
տնտեսություններին պատկանող աղացներում, հացա-
հատիկն աղացվում է ստանդարտ ձևով կազմված
աղուհավարձի անդորրագրերը ներկայացնելուց հետո

Աղացների վարիչները և հաշվետուները պար-
տականությունն են՝ յուրաքանչյուր աղուհատիրոջ ամեն
անգամ բերած հացահատիկն աղալու համար աղուհա-
վարձի անդորրագրեր դրելը, հացահատիկի վերամշա-
կության անդորրագրերի հիման վրա աղուհավարձի
զանձման նշտիվ և մաքուր գրանցումն «Աղուհավար-
ձի հաշվառման օրագրում», նաև Զադոտղեանոյի ստա-
ցականներով և կարգագրերով հանձնված և բաց թողն-
ված աղուհավարձի ժամանակին կատարված գրան-
ցումն օրագրի յեղբի սյունակում և ամեն օր ձեռ-
նարկություններում յեղած աղուհավարձի առկա քա-
նակը դուրս բերելը:

25. Բոլոր աղացները, ձավարաղացները (դինգե-
րը) և ձիթհանները, անկախ նրանց ում պատկանե-
լուց, պարտավոր են յուրաքանչյուր աղուհատիրոջ
ամեն մի անգամ բերած հացահատիկի համար ստան-
դարտ ձևով աղուհավարձի անդորրագրեր դուրս դրել

Զեռնարկությունները պետք է անսղայման կըը-

սեն աղալու համար բերված ամբողջ հացահատիկը և աղունազարձը:

26. Պետական և կոտակերտաթիվ կազմակերպություններին և կալանատեսություններին պատկանող ձեռնարկությունները, վորոնք աղացվող հացահատիկի կանոնադր հաշվառում ունեն (հաշվապահական գրքեր, աղունազարձի հաշվառման որադրեր և աղունազարձի տնդորրագրեր), աղունազարձը հանձնում են հիմնվելով այդ հաշվառման այն տվյալների վրա, վորոնք վերաբերում են փաստացի վերամշակված հացահատիկի, հատիկի, ձիթատու սերմերի, բրնձի և դանձված աղունազարձի քանակին:

Մթերման կոմիտեյի շրջիկագործները պետք և միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի ձեռնարկությունների հաշվետարությունն ասպահովի դրանց կողմից դանձված և հանձնված աղունազարձի փաստացի քանակության ստուգումը:

Մասնավորապես ձեռնարկություններում գտնված աղունազարձի տնդորրագրերը և «Աղունազարձի գանձման հաշվառման որագիրը» պետք է համարակալված, ժապավինված և կնքված լինեն Մթերման կոմիտեյի շրջիկագործի կնիքով:

27. Մանուցագրերում նշվում են աղունազարձը հանձնելու ժամկետները, նաև այն կետի անունը, վորին կցված է ձեռնարկությունն աղունազարձը հանձնելու համար, և այն նվազագույն քանակը, վորը հավաքվելու դեպքում ձեռնարկությունը պարտավոր է, աղունազարձը տանել և հանձնել Ջազոտգեռնոյի կայանին (կամ վերջինի կոնսրագեռնոյի կայանին):

Մանուցագրերը կազմվում են յերեք որինակից:

վորոնցից մեկը հանձնվում է ձեռնարկության տիրոջը կամ վարձակալին, պատճենն ուղարկվում է այն կետին, վորին ձեռնարկությունը կցված է ազունավարձ հանձնելու համար, իսկ յերրորդ որինակը (արժամար) մնում է Մթերման կոմիտեյի շրջապատի գործերում:

28. Ազունավարձի հանձնման կետերի սահմանումը և ձեռնարկությունների կցումը դրանց, կատարում է Մթերման կոմիտեյի շրջապատը, վոր այդ դեպքում պետք է նկատի ունենա ձեռնարկության հեռավորությունը մթերման կետից և նրան կցելու տնտեսական նպատակահարմարությունը՝ ազունավարձ հանձնելու համար, անկախ վարչական սահմաններից:

Ձեռնարկությունները մթերման կետերին կցելիս անհրաժեշտ է առաջնորդվել տեղափոխությունն ամենամեծ չափով կրճատելու և հանդիպական փոխադրություններ բացարձակապես թույլ չտալու նկատառումներով:

29. Բոլոր ձեռնարկությունները պարտավոր են Մթերման կոմիտեյի շրջապատի, ազունավարձի տեսչի, տեղական համայնական ակտիվի, շրջագործկոմիտեի ներկայացուցիչների և գյուղխորհուրդների առաջին իսկ պահանջի դեպքում ներկայացնել իրենց հաշիվները, վերամշակման և ազունավարձի գործարարներից բոլոր այլ փաստաթղթերը:

30. Մանուցագրերը ձեռնարկությունների տեղերին կամ վարձակալներին անմիջապես հանձնեն տեսուչները՝ կամ, նրանց համարմամբ՝ գյուղխորհուրդի կողմից: Մանուցագրերը կցվում են վարձակալի և տեսուչի մոտ:

2
4658006468
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
Հրահանգ 18/44-434/37Ա



ների տերերին կամ վարձակալներին պետք է հանձն-
վեն գրվելու թվահանից վոչ ուշ քան 10 որում:

31. Ձեռնարկությունների տերերին և վարձա-
կալներին կամ պետական, կոտպերատիվ և համայնա-
կան ձեռնարկությունների ղեկավարներին ծանուցա-
գրերը հանձնելիս պետք է յետ վերցվի դրանց կից
յեղած կտրոնը, վոր պետք է ստորագրված լինի ծա-
նուցագիրն ստացված լինելու մասին և պետք է կրի
ստացման թվահանը:

Յեթե ձեռնարկության տերը կամ վարձակալը
հրաժարվի ծանուցագիրն ստանալ կամ այդ ստա-
ցած լինելու առթիվ ստորագրություն տալ, այդ մա-
սին գյուղխորհրդի ներկայացուցչի ներկայությամբ
կազմվում է արձանագրություն, և ծանուցագիրը հա-
մարվում է հանձնված:

Ձեռնարկության տիրոջ կամ վարձակալի ստո-
րադրած կտրոնը պահվում է Մթերման կոմիտեյի
ընթացագրի գործերում:

32. Մանուցագրերում նշված հանձնման յենթա-
կա ազունաւարձի քանակի, ժամկետների և ըստ կուլ-
տուրաների բաշխման մասին յեղած բողոքները ներ-
կայացվում են «ՀՄԽՀ որինքներով սահմանված կար-
գով:

Հանձնման յենթակա ազունաւարձի քանակի,
ժամկետների և ըստ կուլտուրաների բաշխման մասին
յեղած փոփոխությունների դեպքում Մթերման կո-
միտեյի ընթացագրերը, համաձայն համապատասխան
մարմինների վորոշման, փոփոխություններ են մտցը-
նում ծանուցագրերի մեջ՝ նշելով հիշյալ վորոշման

թվահանր և այդ փոփոխություններէ մասին հայտնում են համապատասխան մթերման կետերին:

Մանուցագրերէ բողոքարկումը չի դադարեցնում դրանցով կատարվելիք աղունաւարձի դանձումը:

33. Աղունաւարձի դանձման կանոնները խախտելու բոլոր դեպքերի առթիւ, ինչպիսիք աղուն աղալու (Մթերման կոմիտեյի շրջիազորի գրասենյակում չտոմարագրված ամեն տեսակի ձեռնարկություններէ գործարկումը, տնային, ձեռքի աղորիքների և այլ հարմարությունների գործածելը), վոչ ճիշտ նորմաներով աղունաղարձ դանձելու, ստացված աղունաղարձն ավելի ցածր արժեք ունեցող մշակույթով փոխարինելու, թագցնելու, փչացնելու, աղունատերերից հացահատիկն սմանալիս ճիշտ չհչակելու և մթերման կետերին աղունաղարձն անկանոն հանձնելու և այլ խախտումների առթիւ տեսուչները պետք և սույն հրահանգին կից ձեռվ արձանագրություն կազմեն և այդ հանձնեն դատական և վարչական մարմիններին՝ հանցավորներին պատասխանատուության յենթարկելու համար:

34. Ազացային տրեստները, խորհրդային տնտեսությունների ղեկավարները և կոլտնտեսությունների նախագահները, ձեռնարկությունների վարիչների և սոսիալական պատասխանատու յեն իրենց ձեռնարկությունների գանձած աղունաղարձը ժամանակին և լրիւ մթերման կայաններին հանձնելու համար:

Գյուղխորհուրդների նախագահները պարտավոր են ամեն միջոց ձեռք առնել ապահովելու, վոր իրենց գյուղի սահմաններում գտնվող բոլոր ձեռնարկությունները ժամանակին և լրիւ հանձնեն դանձված աղունաղարձը:

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՈՒՆԱՎԱՐՁՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

35. Ամբողջ ՀՍԽՀ-ում ձեռնարկություններից հացահատիկի, հատիկի, ձիթատու կուլտուրաների և բրնձի աղունավարձն ընդունում և Ջազոտզեռնոն:

36. Ձեռնարկություններից աղունավարձն ընդունվում և Ջազոտզեռնոյի մթերման կայաններում, վորոնց կցված են, առանց բացառության, բոլոր մտտակա ձեռնարկությունները՝ աղունավարձը հանձնելու համար:

37. Այն շրջաններում, վորտեղ Ջազոտզեռնոն իր մթերման կայանները չունի, նա կարող և այդ շրջաններում աղունավարձի ընդունման գործը հանձնել սպառողական կոոպերացիային կամ այլ պետական, կոոպերատիվ կազմակերպության, նրանց հետ պայմանագիր կնքելով՝ կոմիսիոն հիմունքներով աղունավարձն ընդունելու համար:

38. Ձեռնարկություններից աղունավարձն ընդունելու բոլոր դեպքերում մթերման կետերը ձեռնարկություններին հաստատված ձևի ստացական են տալիս՝ «Աղունավարձ» պարտադիր մակագրությամբ կամ շաամպով:

39. Աղունավարձն ընդունած մթերման կետերը պարտավոր են իրենց մտա յեղած ծանուցագրերի հետևին կամ հատուկ դրքերում, կամ կարտտեկայում պահել իրենց կցված ձեռնարկությունների անձնակազմի հաշիվները, վորոնց մեջ ճշտիվ գրանցում են ձեռնար-

կութ յուններէ կողմից հանձնված ամբողջ աղունավարձի քանակը և պարբերաբար, վոչ պակաս քան ամիսը յերկու անգամ, աղունավարձի տեսչին ու գյուղխորհուրդներին հայտնում են այն ձեռնարկութ յուններէ ցուցակը, վոցոնք ծանուցագրերով նշված ժամկետներում չեն կատարում տրված պարտավորութիւնները:

40. Այն դեպքերում, յերբ Զագոտղեանոն աղունավարձի ընդունելութիւնը հանձնում և սպառողական կոոպերացիայի կամ այլ կազմակերպութիւններէ կետերին, դրանք պարտավոր են ձեռնարկութիւններէ ցիրենց ստացած ամբողջ աղունավարձը հանձնել Զագոտղեանոյ միջրման կետերին կամ ուղարկել նրանարյադներով, առաջին իսկ պահանջի դեպքում:

Այդ կետերը՝ պարտավոր են պահել ձեռնարկութիւններէ ցընդունած աղունավարձի լրիվ հաշվառումը և Զագոտղեանոյ մոտակա բաժանմունքին սխտեմատիկաբար հաշիվ ներկայացնել իրենց կետերում ընդունված աղունավարձի մուտքի և յելքի մասին:

41. Բոլոր այն դեպքերում, յերբ միջրման կայաններն աղացներ ունեցող կետերի տեղական մատակարարման նպատակներէ համար հաց բաց թողնելու կարգադրեր (նարյադներ) են ստանում, նրանք պարտավոր են սպառողներին կարգադրեր (նարյադ) տալ այդ հացն անմիջապէս աղացներից ընդունելու՝ աղունավարձի միջոցներից, ընդ վորում այդպիսի կարգադրեր իրացնելու նպատակով առաջին հերթին տեսք և ոգտագործվեն աղացային տրեսաններին պատկանող աղացներում գտնվող մնացորդները:

ՄԹԵՐՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԿԱՆՁՆՎԱԾ ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ԿԱԾՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

42. Ձեռնարկությունները կողմից մթերման կետերին հանձնված աղունավարձի արժեքը վճարվում է այդ կետերի համար սահմանված հացամթերման դնբրին՝ ավելացնելով 30 տոկոս: Այն դեպքում, յերբ հանձնված աղունավարձը տվյալ շրջանի հացահատիկի և ձիթատու սերմերի համար վորոշված հատկությունից (կոնդիցիա) ավելի վատ վորակ ունի, պետք է կիրառել ցած վորակի համար սահմանված դեղջը (ուեֆակցիա):

43. Մթերման կետերն ընդունած աղունավարձի հաշվարկն աղացների հետ կատարում են գործող մթերման դնբրին՝ ավելացնելով 15 տոկոս:

42-րդ հոդվածում հիշված դնբրի հավելում ի մնացած 15 տոկոսը մթերման կետերը և Ջագոտգեւանոյի միջըջանային գրասենյակները վճարում են հետևյալ կարգով. 5 տոկոսն անմիջապես փոխանցում են շքըջգործկոմի հաշվին, իսկ 10 տոկոսը փոխանցում են այն գյուղխորհրդի հաշվին, վորի սահմաններում դտնդում են աղունավարձ հանձնող աղացները:

Մթերման կետերը և Ջագոտգեւանոյի միջըջանային գրասենյակները շրջգործկոմների և գյուղխորհրդիների հաշվին փոխանցում են ամենամիս, վաչ ուշ քան յուրաքանչյուր ամսվա 5-ը և միատամանակ շրջգործկոմին և գյուղխորհրդիներին ծանուցագրեր են ուղարկում՝ ցույց տալով անցած ամսի

ընթացքում յուրաքանչյուր աղացից ընդունված
աղունավարձից նրանց հասանելիք գումարը:

ՀԻՆԳՆԲՈՐԴ ՄԱՍ

ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

44. Աղունավարձի գանձման գործառնություններին, այսինքն՝ թե անմիջապես Ջազոտղեոնոյի գծով կատարված ընդունումների և թե կոպերացիային կամ այլ կազմակերպությունները պատկանող կետերի ընդունումների ֆինանսավորումը կատարում և Պետրանկը՝ 1935—36 թ. հացամթերումների գործառնությունների սովորական կարգով:

Հանձնվելիք աղունավարձի հաշվին ձեռնարկություններին ավանսավորելը չի թույլատրվում:

ՎՆՑՆԲՈՐԴ ՄԱՍ

ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ԸՆԳՈՒՆՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՅՈՂ ԿՍՁՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԵՑԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱԳԻՐ ԾԱԽՍԵՐԻ ՅԵՎ ԿՈՄԻՍԻՈՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

45. Ջազոտղեոնոյի հանձնարարությամբ ձեռնարկություններից աղունավարձն ընդունող սպառկոպերացիային և այլ կազմակերպություններին պատկանող կետերի ծախսերը վճարում են 1935—36 թ. հացամթերման կամպանիայի ժամանակ մթերված հացի ընդունման առթիվ կոնտրագենտների ծախսերը վճարելու կարգի համաձայն:

46. Ընդունող կետերին կամ շրջափոխանը հասանելիք կոմիտեոն վարձատրությունը Չագոտզեոնոն վճարում և այն չափով, վորը սահմանված և 1935—36 թ. հացամթերման կամպանիայի առթիվ կոոպերացիայի ստորին ցանցի համար

47. Այլ դեպքում, յերբ աղունաղարձի ընդունման կետ և հանդիսանում այն ձեռնարկությունը, վորը պարտավոր և հանձնել սեփական աղունաղարձը, այդ կետը սեփական աղունաղարձի համար ծախսերի վոչ մի հատուցում և կոմիտեոն վարձատրություն չի ստանում:

ՅԱԹԵՐՈՐԴ ՄԱՍ

ՍԱՆԿՑԻԱՆԵՐ՝ ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ԳԱՆՁՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԿԱՄԱՐ

48. Աղունաղարձի կանոնները խախտելու համար գործադրվում են այն վարչական և քրեական սանկցիաները, վորոնք հաստատված են ՀՍԽՀ Կառավարության կողմից՝ հիմնված ԽՍՀՄ Կենտրոնականի և Ժողկոմխորհի 1932 թ. սեպտեմբերի 27-ի ու 1933 թ. հունվարի 9-ի և ՀԱՄԿ(Բ) ԿԿենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. հունվարի 17-ի վորոշումների վրա:

49. Մուտք յեզած աղունաղարձն ապորինի կերպով ծախսելու համար մասնավոր ձեռնարկությունների տերերը և վարձակալները, ինչպես և պետական, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպություններին պատկանող ձեռնարկությունների պաշտոնատար անձինք, յենթարկվում են քրեական պատասխանատվության՝ «Պետական ձեռնարկությունների, կոլտըն-

տեսությունների և կոռուպցիայի դուրսը պահպանելու և հանրային (սոցիալիստական) սեփականությունն ամրացնելու մասին՝ ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1932 թ. ոգոստոսի 7-ի վորոշման և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 4/5 № 1026 վորոշման հիման վրա:

Աղուչավարձի գանձման կանոնների այլ խախտումների համար (աղուչավարձ չգանձելը, վարձը դրամով գանձելը, մի մշակույթը մյուսով փոխարինելը և այլն) մասնավոր ձեռնարկությունների տերերն ու վարձակալները պարտավորված են յենթարկվում քրեական կամ վարչական կարգով, իսկ պետական, կոռուպցիայի և այլ հասարակական կազմակերպությունների պաշտոնատար անձինք՝ ցրեյական և դիսցիպլինար կարգով, համաձայն գոյություն ունեցող որենսդրության:

Բացի այդ, կոռուպցիայի և այլ հասարակական այն կազմակերպությունները, վորոնց պատկանող ձեռնարկություններում թույլ և արվել աղուչավարձի գանձման կանոնների խախտում, նույնպես և մասնավոր ձեռնարկույցաների տերերն ու վարձակալները, մթերման կոմիտեյի շրջակա գործերի կարգադրությամբ, տուգանքի յեն յենթարկվում մթերքով (հացահատիկով)՝ պետության կողմից պակաս ստացված աղուչավարձի սահմաններում:

Մթերման կոմիտեյի շրջակա գործերի դիմումով՝ շրջագործկոմներն աղուչավարձի գանձման կանոնները խախտողներին վրա վարչական և դիսցիպլինար տուգ են դնում, վորն իրագործում են միլիցիան և գյուղխորհուրդները:

Աղուչավարձի կանոնների խախտման հետևան-

քով պետութեանը պակաս տրված հացահատիկի քանակի սահմաններում մթերքով զանձվող տուգանումները վերջում են մթերման կոմիտեյի շրջապատները և իրադրծում են գյուղխորհուրդները:

50. Ինչպես աղացներում, նույնպես և դանազան տնայնագործական, տնային հարմարություններով դադանի աղուն աղալը պետք է համարվի իբրև աղունալարձի կանոնների խախտում, վորն սմանդակում է խորհրդային տնտեսությունների և կոլեկտիվ տնտեսություններին պատկանող հացը վատնողներին և նըպաստում է կուլակային դիմադրութեանը՝ հացամթերումների զործում, աղունալարձի ապորինի յուրացմանը և վատնելուն: Ուստի և դադանի աղուն աղալը հայտարերելու բոլոր դեպքերում հանցավոր անձինք պետք է դատական պատասխանատվութեան յենթարկվեն, համաձայն Գերագույն դատարանի նախագահութեան 1934 թ. սեպտեմբերի 16-ի № 3/43 վորջումով հաստատված կարգի:

Խորհրդային տնտեսություններին և կոլտնտեսություններին պատկանող աղացներում, աղունալարձի վատնում հայտարերելու բոլոր դեպքերում, վատնըված աղունալարձը զանձվում է համապատասխան խորհրդային տնտեսութեան կամ կոլտնտեսութեան հացի ամեն տեսակի միջոցներից (ֆոնդերից),

Անկախ դրանից, վատնում կատարելու մեջ հանցավոր ճանաչված վարիչները, խորհրդային տնտեսությունների և կոլտնտեսությունների դեկավարները և այն անձինք, վորոնք աղունալարձն ապորինի կերպով ծախսելու կարգադրություն են արել, յենթակա

յին քրեյական պատասխանատվության, համաձայն սույն հրահանգի 48 և 49-րդ հոդվածներին:

51. Այն բոլոր դեպքերում, յերբ հայտարարվի, լոր տեղական, շրջանային կազմակերպությունների կարգադրությամբ աղացներից ազունավարձ և վտանքվել, այդ բանում հանցավոր անձինք յենթակա յին քրեյական պատասխանատվության՝ հացի պետական միջոցները վատնելու համար:

ՈՒՅՆՆԵՐԻ ԿՐԿՐՈՒՄ

ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ԹՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՍՈՒՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

52. Տեսուչների վրա պարտականություն և դրվում.

ա) հաշվառման յենթարկել սպասարկվող շրջանի սահմաններում գտնվող բոլոր ալյուր և հատիկ աղացող ու ձիթհան ձեռնարկությունները (վորտեղ գտնվելը, ում պատկանելը, կարողությունը, արտադրողականությունը և ձեռնարկի բեռնվածությունը):

Այդ հաշվառումը կատարվում և անմիջական հետազոտությունների, գյուղխորհուրդների և այլ կազմակերպությունների տվյալների հիման վրա.

բ) յենելով Ժողկոմխորհի կողմից հաստատված պլանից, ձեռնարկությունների ցանցից և դրանց բեռնվածությունից ու հաստատված ազունավարձի դրույքներից՝ մշակել և Մթերման կամիսեյի շրջապարհների միջոցով ներկայացնել շրջգործկոմիտեին ի հաստատություն ազունավարձի գանձման տարեկան պլանն ըստ ամիսների, մշակույթների և առանձին ձեռնարկությունների:

Մշակել և ներկայացնել ի հաստատութիւն ձեռնարկութիւններ լի ներհարկադրման նյութերը.

գ) հիմնվելով շրջանի համար հաստատված աղունաւարձի դանձման պլանի վրա՝ դրել և ձեռնարկութիւններին տալ աղունաւարձի հարկադրման ծանուցադրերը և, Մթերման կոմիտեյի շրջլիազորների ցուցմունքների համաձայն, հիմնված այդ աւթիով կայացած վորոշումների վրա, ծանուցադրերի մեջ համապատասխան փոփոխութիւններ յայտնել.

դ) ձեռնարկութիւններին՝ աղունաւարձը հանձնելու համար՝ կցել մթերման կայաններին, նախորդ այդ հարցը հարմարեցնելով Զազոսդեանոյի համապատասխան դրասենյակների հետ.

ե) Մթերման կոմիտեյի շրջլիազորի միջոցով յեզրակացութիւն տալ ձեռնարկութիւնների կողմից սխալ հարկադրումների մասին հարուցված բողոքների աւթիով.

զ) տեղական իշխանութեան և միլիցիայի միջոցով պայքարել ամեն տեսակի գողտնի աղուն աղալու դեմ, վորը հանդիսանում է հացամթերման դեմ մղվող կուլակային պայքարի ձեերից մեկը.

է) սխտեմաաիկորեն հսկողութիւն ունենալ, վոր ձեռնարկութիւնները տոմարաւրվեն Մթերման կոմիտեյի դրասենյակում, աղունաւարձ հանձնելու ծանուցադրեր ստանան, ճշտութեամբ կիրառեն աղունաւարձի գանձման նորմաները, պահպանեն ու ժամանակին մթերման կետերին հանձնեն աղունաւարձը:

ը) ձեռնարկութիւնների կողմից գանձված աղունաւարձի ճիշտ հաշվառումն ու հաշվետարութիւնն ապահովել:

Համարակալել, կարել և կնքել ձեռնակություննե-
րի ազունավարձի գանձման հաշվառման գրքերը, որ-
գրքերը և ազունի անդորրագրերը.

Թ) կազմակերպել ազունավարձի գանձման վրա
հսկողություն ունեցող հասարակական պոստեր և դրանց
հրահանգներ տալ: Կազմակերպել խորհրդային և կոլեկ-
տիվ տնտեսությունների կողմից ավանսով Չագոտգե-
սոյի կետերին ազունավարձ տալը.

Ճ) պայքարել ազունավարձի հանձնման կանոն-
ները խախտելու, մասնավորապես դաղանի ազուն ազա-
լու դեմ՝ միջոցներ ձեռք առնելով այն վերացնելու հա-
մար, և հանրապետական գործող որենքների կարգով
հետախուզություն հարուցել կանոնները խախտողնե-
րի դեմ:

Կանոնները խախտելու առթիվ արձանագրու-
թյուն կազմել և այն հանձնել դատական և վարչական
մարմիններին՝ հանցավորներին պատասխանավության
յինթարկելու:

Հետևել, վոր գործերը դատարաններում ժամա-
նակին քննվին, և միջոցներ ձեռք առնել՝ քննու-
թյունն արագացնելու նպատակով:

Համապատասխան որենսդրության համաձայն և
Մթերման կոմիտեյի շրջիտգործների հաստատությամբ,
ազունավարձի կանոնները խախտողներին տուգանել:

Ի) հսկողություն ունենալ և թույլ չտալ, վոր
ձեռնարկություններում առանց կարգագրերի (ապրիլի
կարգով) ազունավարձը ծախսվի:

Լ) վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ այցելել
ձեռնարկությունները՝ ճշտելու ազունավարձի գանձման

կանոններն պահպանուածը և ժամանակին աղուճաւարձը մթերման կետերին հանձնելը.

խ) կազմել աղուճաւարձին վերաբերող տեղեկանքները և այլ նյութերը.

ծ) տեսուչն իրավունք ունի բոլոր հաստատութիւններից և ձեռնարկութիւններից պահանջել, զոր իրեն ներկայացնեն շրջանի աղուճաւարձի դանձմանը վերաբերող տվյալներ, ինչպես նաև աղուճատերերից՝ նրանց փաստացի վերամշակած հացահատիկի վերաբերմաբ, ձեռնարկութիւնների կողմից դանձված աղուճաւարձի մասին ստացած տվյալները հշտելու նպատակով:

ԻՆՆԵՐՈՐՎ ՄԱՍ

ԱՎԱՆՍՈՎ ԱՂՈՒՆԱՎԱՐՁ ԳՆԱՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

53. Աղուճատերերն աղուճաւարձն ալանսով հարող են հանձնել միայն Ջազոտղեանոյի մերձկայարանային և մերձնավահնդաստային կետերին, ի հաշիվ զորոջ աղացի կամ ձավարաղացի (դինգի):

Կարականանապես արգելվում է ձեռնարկութիւններում ալանսով աղուճաւարձ հանձնելը և ստանալը.

54. Ջազոտղեանոյի մթերման կետերն ալանսով ստացված աղուճաւարձի դիմաց աղուճատերերին տալիս են սահմանված ձևով ընդունման անդորրագրեր, զորոնց մեջ, բացի մշակութի անսակը, վորակը և արժեքը գրելուց, նշում են նաև ճիշտ հացքն այն ձեռնարկութան, զորի հաշվին ալանսով աղուճաւարձ է հանձնվում և այն կազմակերպութիւնն անունը, զորին պատկանում է այդ ձեռնարկութիւնը: Մթերման կետն այդ

անդորրագրի վրա մակագրում է՝ «Ավան արուևավար-
ձի նաւլին»:

Մթերման կետն ալանսով ընդունված ալոււնա-
վարձի անդորրագրերը գրում է յերեք որինակից, վո-
րոնցից մեկ որինակը տալիս է աղոււնատիրոջը, յերկ-
րորդն ուղարկում է Մթերման կոմիտեյի շրջլիւսագրին,
իսկ յերրորդը՝ արմատը՝ թնում է մթերման կետի գոր-
ծերում:

55. Ալանսով իրրե աղոււնավարձ ընդունված հացա-
հատիկի վորակը պետք է ալիլի ցածր շլինի պետու-
թցանը պարտագիր կարգով հանձնվող հացահատիկի
համար սահմանված վորակից:

Ալանսով ընդունված աղոււնավարձի դիմաց թույլ
է արվում վերամշակել այն մշակույթից, վորից հանձն-
ված է մթերման կետին: Աղոււնատիրոջ ցանկությամբ
կարելի յէ վերամշակել ալիլի պակաս արժեք ունեցող
մշակույթներ (գորի), վարսակ և այլն), ի հաշիվ ալան-
սով հանձնված ալիլի արժեքավոր մշակույթների
(ցորնի, տարեկանի և այլն):

Կարականապես արգելվում է ցորնի և տարեկա-
նի վերամշակումն ի հաշիվ ալանսով հանձնված ալիլի
ցածր արժեք ունեցող մշակույթների:

56. Աղոււնատերը և այն ձեռնարկությունը,
վորի հաշիլին ալանսով աղոււնավարձ է հանձնվում,
պետք է համաձայնագիր կնքեն հացահատիկի վերամշակ-
ման աւթիղ, նշելով վերամշակության յենթակա հացա-
տիկի քանակի, աղացին հանձնելու ժամկետների,
տրտագրությանը հանձնելու ժամկետների և Զազաու-
զեանսի մթերման կայանին ալանսով աղոււնավարձ
հանձնելու ժամկետների մասին:

Վերամշակության առթիվ համաձայնություն կա-
յացնելուց հետո, ավանսով աղունավարձ հանձնող
աղունատերն աղացի վարիչին և տալիս Ջագոտղեւնոյից
ստացած անդորրագրերը՝ ստանալով ստացական: Հի-
շյալ անդորրագրերն ստանալուց հետո միայն աղացը
կարող է սկսել ավանսով աղունավարձ հանձնող աղու-
նատերերի հացահատիկի վերամշակությունը:

57. Այն աղացները, վորոնց հաշվին ավանսով
աղունավարձ և հանձնված, պարտավոր են յուրաքան-
չյուր աղունատիրոջ համար անձնական հաշիվներ բա-
նալ և ամեն ուր, ըստ մշակույթների, ճշտիվ գրանցել
ավանսով հանձնված աղունավարձի դիմաց վերամշակ-
վող աղունի քանակը:

Այդ հաշվի մուտքի մասում ըստ մշակույթների
գրանցվում է ավանսով հանձնված աղունավարձի քա-
նակը, իսկ յեւթի մասում՝ վերամշակված հացահատիկի
և գրա համար հասանելիք աղունավարձի քանակը,
վերամշակված հացահատիկի յուրաքանչյուր պար-
տիայի համար աւանձին: Այդ հաշվի յեւթի մա-
սում գրանցումները կատարվում են աղունավարձի
անդորրագրերի հիման վրա, անպայման նշելով անդոր-
րագրերի համարը և վերամշակության թվականը:

58. Ջագոտղեւնոյի կետերն ավանսով աղունա-
վարձ հանձնող աղունատերերի հետ վոչ մի գրամական
հաշվարկ չեն կատարում: Ջագոտղեւնոյի կետերը հան-
ձնված աղունավարձի հաշվարկը կատարում են անմի-
ջապէս աղացների հետ, վորոնք ներկայացնում են
իրենց հաշվին աղունատերերի կողմից հանձնված աղու-
նավարձի անդորրագրերը:

59. Այն պեղքերում, յերբ տպալու բերված հացա-

հատիկի պարտիայից հասանելիք աղունավարձի քանակն ավելի յե, քան ավանտի մնացորդը, այդ դեպքում աղացներն իրավունք ունեն ազալու բերված հացահատիկից բնամթերքով գանձել հասանելիք աղունավարձից պակաս յեղած քանակը:

60. Այն դեպքերում, յերբ վերանորոգության կամ այլ պատճառներով ձեռնարկությունները չեն աշխատում, ավանսով աղունավարձ հանձնած աղունատիրոջ աղունը պետք է անպայման աղացվի մոտակա գործող աղացում, ի հաշիվ նախորդ վճարված ավանտի, առանց վորևէ լրացուցիչ վճարի՝ դրամով կամ բնամթերքով: Վերանորոգվող և նրա փոխարեն հացատիկն աղացող աղացները պետք է ազալու համար հաշվարկ կատարեն իրար հետ, անկախ աղունատիրոջից:

Վորպեսզի աղունատերը դեպի վերանորոգվող կամ այլ պատճառով չգործող աղացը հացհատիկի ազարդյուն փոխադրություն չկատարի, ձեռնարկության վարիչը պարտավոր է աղացի չգործելու մասին նախորդ գրավոր հայտնել ավանսով աղունաված հանձնած աղունատիրոջ և միաժամանակ պետք է ցույց տա այն մոտակա աղացը, վորը պետք է չգործող աղացի փոխարեն նրա աղունն աղա:

Մքերման Կոմիտեի

Հայաստանի Կիպար՝ Ա. ՅԵՍԱԹԱՆ

Յերեվան, 1925 թ. հունիսի 26



Տեխ. խմբագրիչ՝ Լ. Մարտազյան

Լեզվ. խմբ.՝ Արթ. Գրիգորյան

Մրցադրիչ՝ Գար. Լուկարյան

Փլանվիճակի լիազոր Ս. — 432,

հրատ. № 265, պատմիչ 550, տիրույթ. 1500

Հանձնված է տպագրության 13 սեպտեմբերի 1935 թ.

Ստաշտպարված է տպագրելու 5 հոկտեմբերի 1935 թ.

Գյուլգերատի տպարան, Յերևան, Նուբարյանի № 13

ԳԱՍ Հիմնարար գիտ. գրադ.



FL0038261

[074]

A $\frac{I}{4012}$



Пров. 1940г.

РРов